

ԱՐԻԵՍՏԻՆ ՀԱՄԱՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՒՆ
ԽԵՆԹՈՒԹԻՒՒՆ
ԴԻԻՑԱԶՆՈՒԹԻՒՒՆ

ասոնք են ողբերգական երեք դէմքերը խորհրդագործութեան:

Եթէ պատմական է շրջանը՝ սահմանագծե՛նք անկիւնները, հաստատե՛նք ատաղձները եւ ողջունե՛նք անյագ երկրաչափը, որ, վե՛րջապէս, հեռուներու մէջ կը նշմարէ ջահերը նոր տեսիլքներու:

Ստուգութեան տեղ՝ խանդոտ հպարտութիւնը նոր գիտակցութեան, իբրեւ հիմ՝ եղբրական եսի յամառ որոնումը:

Անապատի՞ մէջ:

Այո՛, անհունին առջեւ:

* * *

Ողբերգականը՝ արւեստագէտի մը համար՝ շրջակայ կեանքի բթաշարժ մեքենայութեան կծու եւ անողոք մտրակումն է: Բանտը:

Բանտը՝ իր միանման շարժուձեւերով, համօրինակ քայլերով, մակաբոյժ խօսքերով, տնտնացող կշռութեամբ, սին ու վայրենի, միաձայն ու ողոքող երգերով:

Ողբերգականը՝ ուռնադրորդ կոչն է, անվայել խաղն է կեանքի ապուշ նիւթականութեան:

Փորը անամօթօրէն կը դիմածուի սրտի տեղ, կը ճարճատի ու կը շաչի ճիւղաղային ծիծաղներով հոն, ուր մտքի ամենափոքր նշոյլ մը իսկ կը նկատէ:

Եւ այդպէս, մամուկի քօղը բոլոր գոյներուն վրայ համասփիւռ:

Ողբերգականը՝ բնութեան բազմոլոր եւ ծանրածանր շղթաներն են: Սոսկավիթխար, տձեւ ու սեւ բանտը կը լափէ մեզ: Մենք եւս կ'ուզենք զինքը լափել, բայց մենք մեր արիւնովը, վիշտերովը, տենդերովը, լարւած մարմնի ամբողջ ոյժովը, իսկ ան՝ սառնասառոյց անտարբերութեամբ:

Բնութիւնը մեզ չի ճանչնար:

Եւ ողբերգականը մարդկային միտքն իսկ է: Բանտ մը եւս: Անուրջներու թշնամին, խորանարդ թւաբանութիւնը, զոր ուղեղը կը մրճէ $2 \times 2 = 4$ ը, տրամաբանական սուտը, անստոյգ ստուգաբանութիւնը: Չէ՞ք տեսներ՝ վաճառականը կը կշռէ ամեն բան, իսկ «մտաւորականը»՝ ամեն գաղափար:

Ազնիւ մարդիկ:

* * *

Գռեհիկ մարդը կը քաշքշէ ամենօրեայ իր կեանքը եւ կանոնաւորապէս կը կրկնէ ուրիշներուն ձեւերը, կանոնաւոր կերպով կ'ուտէ, կը խմէ, ամեն առաւօտ իր լրագիրը կը կարդայ, երեխաներ կը ստեղծէ եւ կանոնաւոր կերպով՝ շուներու նման կը մեռնի:

* * *

Արւեստագէտը՝ իսկական ստեղծագործ միակն է, որ կը համարձակի հանդիպադրել իր լինելու կամքը՝ մեքենայնութեան բռնութեան վրայ: Վասնզի ան միակն է, որ ներուժօրէն կը զգայ բանտի ծանրաբեռն ճնշումը եւ կը բաղձայ ազատութիւնը:

Փամանակի եւ տարածութեան դէմ ան կը ճակատի տեւականութեամբ. մեքենայնութեան դէմ՝ ստեղծագործութեամբ:

Ազատ արարչութիւնը բանալին է կեանքի բոլոր խոր-
հուրդներուն:

Յայտնատեսական ճիգովն է որ կարելի պիտի ըլլայ սուզել
աչքերը իր հոգւոյն մէջ, աչքերը՝ որ կը հոլանեն բազմատեսակ
խաղերը տիեզերական ճոխութեանց եւ որ կը նշմարեն կեան-
քի ողբերգական բոլոր դիմակներու երազուն արտայայտու-
թիւնները: Բանտի մէջ լոյս պիտի տեսնեն, եւ հոն, իրենց ստա-
ցած գիտակցութենէն տոգորւած, պիտի դնեն սկիզբը անսպա-
սելի յայտնատեսական խորագննութեանց:

Սկիզբը՝ յուզիչ եւ տանջալի հոգեկան տռամի:

* * *

Միանգամ ընդ միշտ հասկնանք՝ կեանքը արտացոլացումն
է մարդկային գերագոյն եսին:

Խուլ գիշերներու մէջ մերթ կը լսենք անձնասպաններու
ճիչը, մերթ քողարկւած ու անյայտ աղաղակները կը սողոս-
կին մեր որմերու վրայէն եւ սարսափահար կը գիտակցինք, որ
յաղթական ձայներ են անոնք:

Վասնզի կ'ըսեն անոնք տիեզերքին՝ կամ մե՛նք, կամ
դո՛ւն, եւ իրենց գանկերը զարնելով ժայռերուն՝ դիւցազնա-
բար հրաչք կը ստեղծեն:

Արդարեւ, անձնասպանները եւ արւեստագէտները միայն
կը զգան պահանջը յաղթելու կամ յաղթւելու:

Արւեստագէտը կը սիրէ անձնասպանը, բայց գիտէ, որ յաղ-
թութիւնը ստեղծագործել ըսել է, այսինքն մեռեալներու ար-
ցունքներէն ու ծիծաղներէն քան հիւսել:

Ատոր համար խենթութիւն պէտք է, եւ դիւցազնութիւն:

* * *

Գիտե՛նք՝ երբ կենդանին խենթեցաւ, ծնաւ իր մէջ մա՛րդը:
Գիտե՛նք՝ երբ խենթութիւնը համբուրեց մարդուն ճակատը՝
ան կրօնական դարձաւ:

Արևեստը բացարձակ խենթութիւն է:

Եւ սրտայոյզ ընդոստման մէջ դէպի երկիրները, զոր անուրջները պիտի իրագործեն, հիացական հոլաթեւ խօլութիւնը անհրաժեշտ պայմանն է խորհրդագործութեան. արևեստի հիմնական հնչականութիւնն է ան:

Խենթութիւնը արարչական ըմբոստութիւն ըսել է: Եթէ դուն ըմբոստ ես, սեւ գիծ մը քաշէ՛ բնականոն տիմարութեանց վրայ եւ թեւարկէ, եթէ կը բաղձաս երկիրքը:

Ո՞վ ըսաւ, որ արևեստը կեանքի դէմ է: Ընդհակառակը՝ կեանքի հետ է, բայց բովանդակ կեանքի հետ: Մարդը, գայլը եւ օձը, բոյսերն ու ծառերը, ծովային բոլոր տարօրինակ ծաղիկները, բոլոր թանկագին քարերը ներուժօրէն նորէն պիտի ծաղկին ու ապրին փայլակնացայտ ծիծաղներով: Մենք կ'ըմբռնենք բովանդակ կեանքը իբրեւ մեր եսի զարմանահրաշ տեսիլ մը:

Ո՞վ ըսաւ, թէ կեանքի դէմ ենք:

Բայց, հա՛րկ է գծել մոգական գիծ մը իր շուրջը եսի պաշտպանութեան համար: Հա՛րկ է անջատելի բնականոնէն, ամեն բանի վաճառականէն, կոյրէն եւ կարճամիտէն, անսխալականէն մակաբոյժ հոգիներէն, պուրժուայէն՝ նեղ ու մանրահաշիւ սիրտէն, հակագեղագիտական ամուլ ու մթին ճիւղէն: Հարկ է անջատել:

Հոն, այդ չըջանալի մէջ, ստեղծագործը պիտի հաստատէ իր թագաւորութիւնը, բարձրայօն աշտարակներով, որոնք կը ճակատին աստղերու անձանօթին հետ: Հոն, ան պիտի տառապի եւ տառապանքներու մէջէն պիտի դիտէ ամեն երեւոյթ: Իրականը եւ փաստերը (լրագրականը) տապալելով, ան պիտի կրկնապատկէ էական կշռականութիւնը, պիտի լսէ գոյութեան թաքուն երաժշտութիւնը, ու անոր սքօղած ձայները, եւ անոր սրտի սանձարձակ թնդիւնը: Առարկաները, կենդանիները եւ բոլոր երեւոյթները մեր եսի՝ իրենց խորհուրդները սփռած են տիեզերքի մէջ. հարկ է կարողանալ զանոնք հասկնալ եւ ընթանալով գիւտէ ի գիւտ՝ մարգարէանալ. հարկ է կեանքի բարձր սարաւանդի վրայ կանգնած՝ մարտնչելով աղաղակել Տիեզերքի նոր պատկերը:

Նայիլ աչքերով, որ վատթարացած են սովորութեամբ, դաստիարակութեամբ եւ այն ամեն բաներով, զորս քանակը կ'ընդունի, կը նշանակէ՝ ոչինչ չնշմարել:

Պէտք է ունենալ հոգետեսի կուրուլթիւնը, ներքին արեւը, ստեղծագործ խօլութիւնը:

Ով որ գիտէ՛ կարգալ իր հոգւոյն տաղերը՝ գիտէ եւ հասկնալ տիեզերական բոլոր տաղերը:

Ատոր համար՝ դիւցազնութիւն պէտք է:

* * *

Ան, որ կը յանդգնի եւ գիտէ տեսնել իր սեփական աչքերով, հերոս մըն է: Վասնզի անմխիթար պատերազմի մէջ է ան, թէ՛ իր դէմ, թէ՛ ուրիշներու դէմ:

Աստուած յղացաւ երկիրը եւ երկինքը, որովհետեւ տեսաւ զայն: Եւ բանաստեղծը նոր առասպելներ քանդակելով՝ կը տեսնէ զանոնք եւ կը յանդգնանայ:

Աստուած ապստամբելով անգոյութեան դէմ՝ ստեղծագործեց. բանաստեղծը արարչին դէմ կ'ըմբոստանայ՝ նոր անգոյութեան դէմ:

Արեւստը ըմբոստութիւն է Աստուծոյ դէմ:

* * *

Եհովա՛, տէրերու տէր, կը լսե՞ս մեծափարթամ երգը, որ կը բարձրանայ մոյթերուն մէջէն: Արագաշարժ դասերը պար կը բռնեն սեղանին շուրջը, որպէս զի զոհաբերած դիակներէն՝ այնքա՛ն խեղճած ու արիւնախանձ՝ նոր արձանները կանգնեն նոր առասպելներուն:

Կը լսե՞ս, Եհովա՛: